N 01/01-1884

«26» 12 2025

«Նոր-Ջեսի» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Մ. Սարոյանին
(հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Զովք,
ՀՎՀՀ՝ 03535114, էլ. հասցե Nor-jesi@bk.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Սարոյան,

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Նոր-Ջեսի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 24.07.2025 թվականին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՇԱ-3-7 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագրի), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է ապրանքների մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների: Վաճառողը մատակարարել է պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները բացառությամբ 6-րդ չափաբաժնով նախատեսված 3 հատ կերամիկական լվացարանից:

Հիմք ընդունելով, որ «Նոր-Ջեսի» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն պայմանագրի 2.4.1 կետի (Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեյով), «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 2025թ-ի դեկտեմբերի 24-ին միակողմանի մասնակի լուծում է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՇԱ-3-7 ծածկագրով պայմանագիրը՝ 44900 (քառասունչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով:

Տեղեկացնում ենք, որ «Նոր-Ջեսի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցունը ստանալուց հետո **5 (հինգ)** բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանասների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին փոխանցել **224,5** (երկու հարյուր քսանչորս

ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ՝ **որպես տուգանք** (Պայմանագրի 6,3 կետի համաձայն) և **2087.9** (երկու հազար ութսունյոթ ամբողջ ինը տասնորդական) ՀՀ դրամ՝ **որպես տույժ** (Պայմանագրի 6,2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 23.12.2025թ ներառյալ: Ինչպես նաև պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **4800** (չորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը կազմում է **7200** (յոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվի վերոնշված գումարները և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացվի ՀՊՏՀ-ի գնումների բաժին, ապա «Նոր-Ջեսի» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ **Ա. Գրիգորյան**

Կատարող գնումներ համակարգող՝

Գոհար Թադևոսյան

հեռ.593-483